

## ՀԱՅՏՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է ներքին մրցույթ՝ Նախարարության երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության օդային և ջրային տրանսպորտի քաղաքականության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 22-33-9-Մ4-2) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:**

Ներքին մրցույթին կարող են մասնակցել տվյալ համապատասխան մարմնի հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները, որոնք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Նախարարության երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության օդային և ջրային տրանսպորտի քաղաքականության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 22-33-9-Մ4-2) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք ծանոթանալ կից:

Նախարարության երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության օդային և ջրային տրանսպորտի քաղաքականության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 22-33-9-Մ4-2) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
2. անձնագիր և/ կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ՝ պատճենով կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայական՝ պատճենով,
6. մեկ լուսանկար 3+4 սմ չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2020 թվականի հունվարի 15-ից մինչև 2020 թվականի հունվարի 24-ը ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը 9.30-ից 12.30-ը և 14:00-ից 17:00-ը:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2020 թվականի փետրվարի 17-ին՝ ժամը 11:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2020 թվականի փետրվարի 19-ին՝ ժամը 11:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի <<Հարցարան>> ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 150799 (մեկ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր ինսուսինը) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- Սահմանադրություն. հոդվածներ՝ 89, 91, 93, 147  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>

- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2, 4, 6, 10,22  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131562>

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ հոդված 2, 3, 4, 5, 6,15  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132720>

- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 4, 10, 12, 17, 21, 23, 24, 37  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120807>

- «Ավիացիայի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 2,4,5,7-13,15,19,21,25,31,32,,35,36,44,45,52,54,55,63,66,67  
հղումը՝ <https://www.arlis.a/DocumentView.aspx?DocID=137070>

- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 1,4,15,16  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94473>

- <<Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին>> Կոնվենցիա (Չիկագո 07.12.1944թ.), հոդվածներ՝ 19,20,96  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81202>

- <<Միջազգային օդային փոխադրումներին վերավերող որոշակի կանոնների միսնականացման մասին>> Կոնվենցիա (Վարշավա 12.10.1929թ.), հոդվածներ՝ 2,3,4, 9,10,11,13,14,16,17  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81040>

- ՀՀ կառավարության 23.10.2019թ. <<ՀՀ-ում մրցունակ և կայուն ավիափոխադրումների ծառայությունների մատուցման ապահովման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումները հաստատելու մասին>> N 1248-Ա որոշում, նախաբան, հոդված 3  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86975>

- ՀՀ կառավարության 06.08.2015թ. <<Օդանավ շահագործողի վկայական տալու կարգը հաստատելու մասին>> թիվ 963-Ն որոշում, հոդված 2  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=108519>

- ՀՀ կառավարության 06.08.2015թ. <<Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավ շահագործողների կողմից կանոնավոր առևտրային օդային փոխադրումների իրականացման

հավաստագիր տալու և կանոնավոր օդային հաղորդակցություններ իրականացնող փոխադրողի նշանակման կարգը հաստատելու մասին>> N1010-Ն որոշում, հոդվածներ՝ 3,4 հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110706>

- Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա. Վ. Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղզաշյան: Երևան 2012, էջեր՝ 5, 38, 40, 54, 98,99 հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/egdx>

- <<Գրավոր խոսք>>, Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակություն, Երևան 2012, էջեր՝ 70, 71, 73, 94-97, 104, 106-110, 114, 124-126,134,137,142,147-148,198-201 հղումը՝ <http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝

հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից մասնավորապես՝

- <<Հաշվետվությունների մշակում>> կոմպետենցիա, հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/6.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf)
- <<Խնդրի լուծում>> կոմպետենցիա, հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/4.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf)

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամար՝ 010-511-355, Էլեկտրոնային փոստի հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am):

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԵՐԿԱԹՈՒՐԱՅԻՆ, ՋՐԱՅԻՆ ԵՎ ՕՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՕՂԱՅԻՆ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ  
ՄԱՍՆԱԳԵՏ**

**1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության (այսուհետ՝ Վարչություն) օդային և ջրային տրանսպորտի քաղաքականության բաժնի (այսուհետ՝ Բաժնի) ավագ մասնագետ (ծածկագիրը՝ 22-33.9-Մ4-2)

**1.2. Ենթակա և հաշվետու է**

Բաժնի ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

**1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը

**1.4. Աշխատավայրը**

Հայաստան, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 3

**2. Պաշտոնի բնութագիրը**

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

1) մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

2) մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառի վերաբերող սոցիալ-տնտեսական, հեռանկարային, ընթացիկ և զարգացման ծրագրերի նախագծերի մշակմանը.

3) մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառի մոնիթորինգի իրականացմանը.

4) մասնակցում է օդային տրանսպորտի շահագործման բնագավառում պետական քաղաքականության իրականացմանն ուղղված միջոցառումների մշակմանը.

5) մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառում գիտատեխնիկական առաջընթացի ապահովմանն ուղղված միջոցառումների մշակմանը.

6) մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառում միջպետական համագործակցությանը, իր իրավասության սահմաններում միջազգային կազմակերպություններում նախարարության շահերը ներկայացնելուն.

7) մասնակցում է առաջարկություններ ներկայացնելը պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում մասնակցի (բաժնետիրոջ) լիազորությունների իրականացման, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ենթակա մարմինների ու պետական հիմնարկների կառավարման վերաբերյալ.

8) մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառին վերաբերող տեխնիկական ակտերի ու ստանդարտների մշակմանը.

9) մասնակցում է օդային և ջրային տրանսպորտի ձևավորման և զարգացման քաղաքականության մշակմանը.

10) մասնակցում է օդային տրանսպորտի ոլորտում տեխնոլոգիական նորարարության նպատակային ծրագրերի մշակման և դրանց մոնիթորինգի իրականացման աշխատանքներին.

11) մասնակցում է մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի պետական մասնագիտական քննության անցկացման կազմակերպման աշխատանքներին.

## **Իրավունքները**

1) մասնակցել օդային տրանսպորտի բնագավառի քաղաքականության վերաբերող առաջարկների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուլցագրերի, վերլուծությունների և այլ գրությունների պատրաստմանը.

2) մասնակցել ոլորտի իրավական դաշտի ուսումնասիրության, համապատասխան տեղեկատվության հավաքագրման, ամփոփման և երկաթուղային տրանսպորտի բնագավառի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի, սոցիալ-տնտեսական, հեռանկարային, ընթացիկ և զարգացման ծրագրերի նախագծերի պատրաստմանը.

3) մասնակցել Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակմանը.

4) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանալ Բաժնի առջև դրված գործառնությունների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և կյոթեր.

5) մասնակցել Բաժնի առջև դրված գործառնությունների և խնդիրների իրականացման հետ կապված, խորհրդակցություններին.

6) մասնակցել Բաժնի կողմից սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող աշխատանքների վիճակի մասին զեկուլցումների.

7) համագործակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ.

8) իրականացնել սույն պաշտոնի անձնագրով սահմանված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորությունների իրականացումը.

## **Պարտականությունները**

1) մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

2) մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառի վերաբերող սոցիալ-տնտեսական, հեռանկարային, ընթացիկ և զարգացման ծրագրերի նախագծերի մշակմանը.

3) մասնակցում է օդային տրանսպորտի շահագործման բնագավառում պետական քաղաքականության իրականացմանն ուղղված միջոցառումների մշակմանը.

4) մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառում գիտատեխնիկական առաջընթացի ապահովմանն ուղղված միջոցառումների մշակմանը.

5) մասնակցում է ոլորտի տվյալ բյուջետային տարվա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի վերաբերյալ (ծրագրային բյուջետավորման ձևաչափով) առաջարկությունների կազմման աշխատանքներին և ապահովում է դրանց կատարումն ու արդյունքային ցուցանիշների ներկայացումը:

6) մասնակցում է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում մասնակցի (բաժնետիրոջ) լիազորությունների իրականացման, ինչպես նաև պետական ոչ առևտրա-

յին կազմակերպությունների, ենթակա մարմինների ու պետական հիմնարկների կառավարման վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը.

7) մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառին վերաբերող տեխնիկական ակտերի ու ստանդարտների մշակմանը.

8) մասնակցում է օդային տրանսպորտի ձևավորման և զարգացման քաղաքականության մշակումը.

9) մասնակցում է օդային տրանսպորտի ոլորտում տեխնոլոգիական նորարարության նպատակային ծրագրերի մշակումը և դրանց մոնիթորինգի իրականացման աշխատանքները.

10) մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի պետական մասնագիտական քննության անցկացման կազմակերպման աշխատանքներին.

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

#### **3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն

#### **3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

#### **3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը**

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ 3 տարվա աշխատանքային ստաժ

#### **3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

Ընդհանրական կոմպետենցիաները՝

- Խնդրի լուծում
- Հաշվետվությունների մշակում
- Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները՝

- Բանակցությունների վարում
- Կոնֆլիկտների կառավարում
- Բողոքների բավարարում
- Ժամանակի կառավարում
- Փաստաթղթերի նախապատրաստում

### **4. Կազմակերպական շրջանակը**

#### **4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և (կամ) միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և (կամ) մասնագիտական օժանդակության համար:

#### **4.2 . Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և (կամ) միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և (կամ) մասնագիտական օժանդակության շրջանակներում:

#### **4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

**4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

**4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: